

Աստծո փրկող Լույսը Հակոբ Թուճասյան

Աճյապատակ ու անհաջողակ կյանգից խուսափելով և ապահովություն, արդարություն ու նպատակաուղղված կյանք որոնելով, պատանի հասակում, Հայաստանից եկա Յուճանդիա: Սակայն Յուճանդիական իշխանությունների կողմից բնակվելու իրավունք ստանալու անորոշ ու տանջալից ժամանակահատվածում ավելի ու ավելի խրվեցի աննպատակ ու պրոբլեմներով լի կացության մեջ: Բայց ինձ այդ խավարից ազատեց Տեր Հիսուսի Լույսը:

Վարդագույն

Սովետական Միության անկումից հետո, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի պատերազմի պատճառով, անձնական հանգամանքներս Հայաստանում շատ բարդացան, որի պատճառով ստիպված էի հեռանալ Հայրենիքից, ապահով ու կայուն ապագա Երևանում որոնելու: Սակայն ինչպես պարզվեց, Հայրենիքում բնակություն թույլատրելու ստանալու իմ ակնկալիքները շատ վարդագույն էին: Այստեղ նույնպես ինձ պաշարեց ապագայի գորշ անորոշությունը: Երբ ստացա առաջին ժխտական պատասխանը, բնակության թույլատրելու ստանալու հնարավորությունն, ինչպես նաև ապագայի նկատմամբ հույսերն ավելի նվազեցին:

Խմիչք

Չնայած ես շուտ հանձնվողներից չեմ, եկավ մի պահ իմ կյանքում, երբ կյանքի դժվարությունները ու ապագայի անորոշությունը կարծես անհաղթահարելի էին դարձել: Ես էլք չեի գտնում իմ վիճակից: Մի կերպ այդ վիճակից դուրս գալու համար՝ մեկ փորձում էի ներքին անհանգստությունն անհոտել, մեկ փորձում էի այն մոռանալ, բայց անօգուտ: Ինչպես ջայլամը, որ գլուխն ավազի մեջ է թաղում՝ վտանգը չտեսնելու համար, սկսեցի ես էլ տարբեր սրճարաններ ու գինեղենի հաճախել՝ փորձելով խմիչքի միջոցով հոգուս ցավերը մեղմացնել: Չնայած իմ երեխայական հավատին, թե Աստված ինձ օգնելու է, կյանքի օրերն ավելի ու ավելի էին ծանրանում: Ոչ մի տեղ ու ոչ մեկի մոտ չէի կարող տեսնել: Կյանքս անցնում էր աննպատակ, անհետաքրքիր և ծանձրալի:

Բայց մի պայծառ օր, շատ անսպասելի հրաշք տեղի ունեցավ, որն իմ կյանքն արձատարեց փոխեց: Նստած էի մի մութ սրճարանում, հանկարծ սեղանս լուսավորվեց պատուհանից ներս թափանցած լույսի ճառագայթով, և լսեցի մի ձայն, «Մա Հիսուս Քրիստոսի Լույսն է: Նա ուզում է թե՛ փրկել խավարից, որի մեջ հայտնվել ես»: Այնինչ լսեցի ակացնելով, անկարելի էր հավատալ, բայց ինձ հայտնված Լույսի իրականությունը չէի կարող չհավատալ, որովհետև մի որոշ ժամանակ այն դեռ լուսավորում էր իմ սեղանը: Երբ սրճարանից դուրս եկա, լսեցի նույն ձայնով մի այլ հայտնություն՝ որ ես Հայրենիքում պետք է անուսմանամ: Փիշուկ ասաց, ես իմքս ինձ չէի կարողանում բացատրել, թե ինչ է կատարվում ինձ հետ, որովհետև կյանքում երբեք այդպիսի հայտնություններ չէին պատահել ինձ հետ:



NAME	Hakob	
AGE	33	
COUNTRY	Armenie	
LANGUAGE	Armeens	

Ներքի ինձ

Իսկապես, Ամենաբարձրյալ Աստծո ճանապարհները անմեկնելի են: Մի բանի շարքս անց ես հանդիպեցի լրիվ անծանոթ մի անձնավորության, որը գաղափար չուներ, թե ես ով եմ և թե ինձ ինչ էր կատարվել: Երբ այդ անձնավորությունն ինձ ասաց այն նույն բաները, ինչ էս լսել էի սրճարանում, այսինքն թե Հիսուս Քրիստոսը ինձ կփրկի, անմիջապես հասկացա, որ սրճարանում ստացած հայտնությունը երևակայության արդյունք չի եղել, այլ իսկապես Աստծո ձայնն էմ լսել: Նույն երեկոյան, երբ ես հայացքս երկնքին ուղղած՝ փառք էի տալիս Աստծուն՝ ինձ Իր Լույսին արժանացնելու համար, հանկարծակի երկնքի վրա, ինչպես կինոնկարի պատկերներ՝ բոլոր իմ սխալ գործերը ինձ ցուցադրվեցին: Ես այդ պահին մի աներևակայելի ցավ ու զոջում պարեցի, և սկսեցի մանուկի նման լաց լինել: Ես ամաչում էի, որ իմ ամբիտ ու սխալ արարքներով իմ երկնային Հորը մեծ ցավ էի պատճառել: Եվ ես հասկացա որ Նա այդ կլավ պատճառով Իր Որդուն ուղարկել է այս մութ աշխարհը, որպեսզի Հիսուս Քրիստոսը Իր արյունը խաչի վրա թափելով իմ մեղքերը վաճառ և ինձ ազատի իմ մեղքերի վարձից՝ մահից: Միակ բանը, որ կարող էի ասել, սա էր. «Ներքի ինձ, Հայր իմ, ներքի ինձ ով Տեր Հիսուս, շնորհակալ եմ Քո փրկության համար»: Մի խոսքով, ես հավատացի ու ընդունեցի Տեր Հիսուսի փրկության լուրը իմ ամբողջ հոգով ու սրտով, և Նա ներքե իմ բոլոր մեղքերը, և բացահայտեց ինձ Աստվածաշնչյան ճշմարտության իմաստությունը՝ մեղքի և չարի դեմ

ինչպես նաև պայքարելու ու դիմապահության կարողություն, որ հաղորհարեմ կյանքիս դժվարությունները: Այլ խոսքերով ասած, ես կարծես նորից եմ ծնվել, նոր հայացքներով և պատրաստակամությամբ՝ նպատակաուղղված կյանք վարելու համար:

Ահա մի օրինակ բերեմ իմ կյանքից՝ Աստծո ուժն ու առաջնորդությունը նկարագրելու համար: Հոլանդիայում բնակվելու իրավունք ստանալու վերաբերյալ իշխանությունների կողմից մի քանի անգամ միտակալան պատասխաններ ստանալուց հետո, ստացա նաև տառերի դատարաններից միտակալան դատավճիռներ: Նույնիսկ գործն արդեն հասել էր այնտեղ, որ երկու շաբաթ շարունակ բանտում նստած սպասում էի, թե երբ եմ ինձ Հոլանդիայից վտարելու: Հանկարծ միանգամից և անսպասելի ստանում եմ Հոլանդիայում բնակվելու իրավունք: Իմ փաստաբանի կարծիքով դա անհասկանալի հրաշք էր, իսկ իմ գիտակցությամբ՝ դա միայն իմ Հորաշքագործ Աստծո հոգատարության արդյունքն էր: Հետևաբար Աստված ինձ պարզեց Իր խոստացած նվերը՝ ինձ համար աշխարհի անմեղազեղեցիկ, ամենահոգատար, կարճ ասած՝ ամենալավ կինը:

Ցանկություն

Երբ ետ եմ նայում այն ճանապարհին, որ ես անցել եմ Տեր Հիսուսի հետ, ավելի ուժեղանում այն համոզմունքս, որ մեզանից յուրաքանչյուրի համար ամենակարևոր և անձնալավ բանն այն է, որ կարողանանք հասկանալ ու կատարել մեր Երկնային Հոր կամքը: Աստծո ամենամեծ ցանկությունն այն է, որ մեզ անհրաժեշտ իմաստություն տա՝ Իր կամքը հասկանալու և կատարելու համար: Նա ուզում է մեզ հետ ունենալ հավիտենական, ներդաշնակ և սիրով լեցուն հարաբերություն:

Իմ ամենամեծ ցանկությունն այն է, որ ամեն մարդու կյանք, համձինս քո՝ սիրելի իմ Հայ ազգի զավակ, լցված լինի Աստծո սիրաշատ Լույսով, Նրա Խոսքով, Նրա անընդհատ ներկայությամբ, Նրա աներևակելի բարիկամեցողությամբ, Նրա պարզևած անգնահատելի հույսով և հավիտենական կյանքի Աստվածային խոստումով: Կարճ ասած՝ ունենալ կյանք, որն ունի նպատակ և ապրել Ստծով ու Աստծո համար:

Աստված ինձ պահապան է և տալիս է ամեն ինչ, ինչ ինձ պետք է

պայքարելու համար:

Այդ ժամանակվանից սկսած ես միշտ զգում եմ, որ Նրա ուժով ու սիրով ձեռքն է ինձ առաջնորդում իմ կյանքում: Ես ինձ պահապան է և տալիս է ամեն ինչ, ինչ ինձ պետք է, որ իրականացնեմ ինձ տրված կյանքի նպատակը: Անընդհատ Նրա խոսքի մեջ մնալով՝ ես ստանում եմ նոր հույս, նոր ուժ ու ոգևորություն,

SAVED FROM THE DARKNESS

Hakob came to The Netherlands when he was nineteen years old from the political instable and harassed by war Armenia. In the Netherlands he wanted to build a new future, but his expectations were too optimistic. He knew God existed, but he did not know him as person. One special day he was in the pub and a miracle happened. He saw a ray of light and heard a voice: "This is the Light from Jesus Christ. He wants to save you from the darkness, you are living in". Afterwards he realized that the vision was reality and he converted himself to God. Since then he experiences Gods lovefull, strength and guiding hand in his life.

Կյանքիս օրերն ավելի ու ավելի էին ծանրանում